*ալէն, որ կոչի փոքր Աւետ. Աստուած իւր մեղացն թողութիւն շնորհէ, որ ստացաւ սուրբ մեկնիչս հալալ վաստակոց իւրոց՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոց, հօրն Տէր Կարապետին և մօրն՝ Գնդկի, կողակից Գուլին, թվին ՌՃԾԸ ումն:*

*«Ես սարգայվաք Կարապետս ծառայ եմ այս գրիս կարթացողին և ուսուցանողին, ամէն. թվին ՌՃՀ ումն»:*

*«Թվին ՌՃՂՉ ես Խուդաղօվխեցի:*
*Այս է թվին Տէր Մաղաքին.*
*Որ է որդի սա Խաչիկին.*
*Եւ քահանայ քառասուն ամին.*
*Եւ է հասեալ ԺԸ ամին, և վաղճանեալ կին սորին,*
*Եւ մնացեալ այրի այս եղկելին,*
*Մինչեւ եղեւ քառասուն ամին:*

*Սա վաղճանեալ հազար հարուր ութսուն և երեք ամին,*
*Եւ օգոստոս ամսի տասն և վեցին . . .*
*Որ է քաղաք Նոր Ջուղային և Ղահվելոց եկեղեցին.*
*Եւ ով որ կամեսցի . . . վարք սորին*
*Էր եւ պարկեշտ, Սաղմոսասաց, աղօթասէր,*
*Եւ քարոզող, գիտակ բանին Աստուածային, հին և նոր Կտակարանին*

*Ձեռն վերաւեալ իւր հայրենեացն*
*Դուստր և որդի իւր ընտանեացն . . .*
*Եւ հեռացեալ իւր սիրելեացն . . .*
*Մտեալ ծառայութիւն եկեղեցեացն*
*Մինչեւ օր մահուան իւրոյ:*
*Բարւոք ծերութեամբն հանգուցեալ Քրիստոսի»:*

*«Թվին ՌՄՀՉ- ումն անցած է, չէ մոռծ, դեկտեմբերի վերջին և յունվարի աւելին կիրակի գիշերին. Ա. ժամ գիշեր կար մինչ ի լոյս, անանց սաստիկ շարժում եղաւ երկիր, շատ քաղաքներ քանդուեցաւ. Աստուած հեռի անէ այնպէս բարկութենէն. ամէն»:*

*Բ. Մաշտոց բամբակեայ թղթի վրայ, Սաղխանի վանքին պատկանեալ, որ գտնվում է Սաղխանցի վարժապետ Նիկողա-*